

ապրում, ուսում-խմում և իրանց բոլոր կարիքներին բավականութիւն են տալիս, նոյն իսկ ընտանեկան սրբութիւնն ու պատիւն էլ չեն խնայում: Այճարակի գիւղի զինուորները մի քանի օրվայ ընթացքում բռնութեամբ յափշտակել են այդ գիւղից երեք աղջիկ: Նախ տարել են մէկին, յետոյ, խորտակելով իրանց աջողութեամբ և անպատիւ մնալով՝ տարել են հետեւեալ երկուսին: Սրանք բարենորոգումներ ըսկզբնէն են, որով կամենում են քրիստոնեաների և մասնատակներին մէջ եղած տարբերութիւնը վերացնել և հաստատութիւն հնարել...

Կարսի թիւրքաց հիւպատոսը թոյլ է տալիս իրան՝ հայհոյել և անպատիւ իրան դիմող խեղճ մշակներին և նոյն իսկ փողերը ձեռքերից խլել ու ամսից դուրս անել: Տրտուեցն ու բողբոջներն այնչափ չառաքան այդ հիւպատոսի դէմ, որ մի քանիսն այն յանձնարարեցին՝ գնալ և նրա հետ խօսել, որպէս զի այլ ևս այդպիսի ապօրինի վարմունքներ տեղի չունենան: Ձգալով իր արածները ծանր հետեւեց, սակայն ներկայացուցիչը խոստանում է այսուհետեւ լաւ վարվել և խնդրում է քանակաւոր, որ ուրիշ անգամներ թիւրքացայերի իրան դիմողները գործ ունենան այդ քանակայի միջոցով: Սա էլ դուցէ բարենորոգման նշաններ են:

Ն.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, յուլիսի 14-ին

«Մշակ» լրագրի № 79-ի ներքին լուրերի բաժնում ապագրված վարդապետի լուրը, որը վերաբերում է իմ բժշկական գործունէութեան, ես նկատում եմ իբր գիֆֆամացիա և ստույգում, որով ինձ անպայման թղթակցեց նպատակ է ունեցել ստուեր գցել և արատաւորել իմ քարի անունը, իբրեւ հասարակական գործողի: Ուստի խնդրում եմ հաղորդել ինձ այդ չինքնուրուի հեղինակի անունը և աղգանունը, որպէս զի հնարաւորութիւն ունենամ ներկայից նրան օրինական պատասխանատուութեան: Այնքան ասան օրվայ ընթացքում ձեռնարկ պատասխան չի ստացվի, ես այդ կը համարեմ մերժում և ձեռնարկ, և ստիպված կը լինեմ արդէն ձեռք դնել դատ սկսել գիֆֆամացիայի համար մամուլի մէջ:

Բժիշկ Տէր-Խաչատրեանց

զգոյն թեւեղում: Թէև քուրդ կանաչ աղամարդ կանցից չեն վախճում և իրանց երեւները չեն ծածկում (բացառութիւն կազմում են նշանաւոր ընտանիքները, որոնք աշխատում են նմանվել թիւրքերին), բայց և այդպէս, վրանում կայ առանձին կանանց, որ օտարներ չեն մանում:

Քուրդը համարեա բացառապէս կախով ու պանով է կերակրվում: Հայ մշտապէս գործ են անում միայն հարուստները, իսկ մեծամասնութիւնը շատ անշնան քանակութեամբ է հաց ուտում: Հարաւային Քրդիստանում շատ գործածական է բրինձը: Միւս ուտում են միայն հանդիւսաւոր օրերին, որովհետեւ անասունները նրանց համար շատ թանկ արժեն:

Տեղաբնակիչներին ժամանակ քրդերը ամեն ինչ տանում են բեռներով. սալերը շատ հաղաւթաւ են: Տօն օրերին կամ հարսանիքի ժամանակ քրդերը ձիաքաշ են սարքում և դէնք գործածելու վարպետութեան մէջ մրցում են միմեանց հետ: Քրդի սիրած խաղը— չիրիդն է, այսինքն նետ գցելը, զրա մէջ քրդերը շատ ճարպիկ են:

Քրդերը մեծ մասամբ վտտ հրացանածիգներ են, իսկ նշան դնելու և հետաւոր տարածութեան վրա նպատակին խիստ մասին հասկացողութիւն անդամ չունեն. բայց սիրում են զինգակ արձակել, յոյս դնելով դիպուծի վրա:

Մեր սահմանի վրա ընդհարում տեղի ունեցած ժամանակ քրդերը աշխատում են գրան մտնել ու այնտեղ թաղված գործել. մասիկ տարածութիւնների վրա, եթէ, օրինակ, 200 քայլից հեռու չեն, նրանց կրակը վտանգաւոր է: Սուր ու խնջար բուրդը գործ է անում միայն առնանադարանդ զէպքում կամ երբ կարելի է մօրթիկ անպաշտպաններին: Ուստի զեռ օրինակ չէ եղել, որ քրդերը զինանա հեծելազօրքի կանոնաւոր և միահամուռ բաղխումներին:

ՆԱԽԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գօլիցին վերադառնալու է թիֆլիս օգոստոսի 3-ին:

Անդ հաղորդում են, որ Շուշու թեմական դպրոցի հոգաբարձութիւնը մտադիր է տեսչի պաշտօնով հրաւիրել Երեմիայի թեմական դպրոցի նախկին տեսչէ պ. Տիգրան Յովհաննիսեանին: Ի դէպ, մեղ հաղորդում են, որ Էջմիածին էլ մտադիր է մի հոգաբարձան նշանակել Շուշու թեմական դպրոցի տեսչէ:

Վերջին օրերի անձերներին չնորհիւ թիֆլիսում եղանակը զգալի կերպով փոխվեց: Նախկին չաքի փոխարէն քաղաքի մէջ տիրում է հով եղանակ: Ստուերի մէջ տաքութիւնը մօտաւորապէս 210 R. է:

Հայոց հասարակութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում Մոսկվայում տպագրող «Братская помощь пострадавшим в Турции армянам» ժողովածուի վրա, որի յայտարարութիւնը տպագրում ենք «Մշակի» այսօրվայ համարում: Բացի բուն գրական արժանաւորութիւնների տեսակէտից՝ այդ ժողովածուն պէտք է տարածվի հայերի մէջ և այն հասկանալի պատճառով, որ նրա արդիւնքը յատկացրված է դժբաղդ և կարօտ թիւրքացայերին:

Մեր աշխատակից բժ. Վահան Արծրունի՝ արձակուրդ վերցնելով՝ գնում է Մոսկվա, ներկայ լինելու բժշկական ժողովին: Թիֆլիսի մեր բժիշկներից ուրիշ ով ներկայ պիտի լինի այդ ժողովին— մեղ յայտնի չէ:

Անդ հաղորդում են հետեւեալը. «Յուլիսի 27-ին, գիշերը, թիֆլիսում հետեւալ զէպքը տեղի ունեցաւ: Մի քանի երիտասարդներ քէֆ էին անում, և դրանց թում մի 25 տարեկան երիտասարդ, Ջաքարիա Նաւասարդեան անունով: Ընթերցի ժամանակ նա տեղից վեր է կենում և իր ընկերներին «միտ բարեա» ասելով՝ յանկարծ պատուհանից իրան կուրն է նետում, ուր և զոհ է գնում: Գետնի աղբիւրներին... պատճառն այն է, որ երիտասարդը սիրահարված լինելով մէկ օրերով վրա, ցանկացել է ամուսնանալ. բայց երկուսի ծնողները ու աղգակները հակառակ լինելով, թող չեն տուել, և այդ պատճառով երիտասարդը աւելի լաւ է համարում կեանքից զրկել իրան, որը և իրագործում է:

II

Քրդի տանի աշխատանքները թիւրքերը Պարսկական Քրդիստանում քրդերը այս կամ այն աստիճան հպատակված են կառավարութեան: Նպատակեաց քրդերը, մասնաւոր քաղաքներում ապրողները, տալիս են բոլոր հարկերը միւս աղգերի հետ հաւասար կերպով: Թափառականները միջոցիկ դրամական հարկ են տալիս, եթէ, աշողվում է հարկադրել նրանց և կատարելապէս անկախ են իրանց ներքին գործերի մէջ: Պարսից կառավարութիւնը շատ լաւ է կառուցում ժամանակին աղգել բուրդ զլխաւորների վրա, ուստի քրդերը նրան առանձին ներդրումներ չեն պատճառում: Միւս կողմից, եթէ մեծ պատերազմ տեղի ունենայ, քրդերը հազիւ թէ օգնեն պարսիկներին. աւելի հաւանական է, որ նրանք օգուտ կը բաղեն զէպքից և կը կողոպտեն իրանց քիչ պատերազմաւէր հարեաններին:

Թիւրքերում կառավարչական իշխանութիւնը աւելի ուժեղ է, բայց այնուամենայնիւ, այդ իշխանութիւնը հաւասար չափով չէ ընկած քրդերի վրա: Ուստի քրդերը կատարելապէս հպատակված են և մինչև իսկ տանում են զինուորական ծառայութիւն կանոնաւոր գործերի մէջ: Մինչև այժմ չէ աղաղակ հարկադրել և աշխատի քրդերին կատարել նոյնը: Համիդիէ հեծելազորքը կողմնակալելով, կառավարութիւնը, երկու թողել է քրդերին կանոնաւոր գործի մէջ ծառայեցնելու միտքը: Թիւրքաց իշխանութիւնը գործող է Քրդիստանի մէջ անցնող գլխաւոր ճանապարհների վրա, նոյնպէս և այն քաղաքների մօտ, ուր կան բերդապահ գործեր, բայց Հէրէքարի չլէնը, Տարսուսի լեռների ներքերը և մասնաւոր Գերսիմը մինչև այժմ քիչ են հրապարակում թիւրք իշխանութեան: Երբ թիւրք պաշտօնեաներին հարկաւոր է լինում գնալ սահմանները, կազմակերպում է մի ամբողջ արշաւանք. այդպիսի արշաւանքներ միշտ թիւրքերի համար աշող վախճան չեն ունեցել: Վերում մենք տեսնեմք որ նոյն իսկ քրիստոնեայ Ռուսաստանի դէմ մղած պատերազմների ժամանակ կրօնակիցներին կողոպտեցուց:

Հրաւիրում ենք թիֆլիսի սահմարակաւ վարչութեան ուշադրութիւնը Բարձրակարգ փողոցի վրա, որտեղ կանկարաւորներ չարքերի մօտ, յուլիսի 29-ին ամեն տեսակ կեղտոտութիւններ է հետ միասին՝ կարելի էր տեսնել սասկած չուն, արդէն հոտած...

Այսօր, հինգշաբթի, յուլիսի 31-ին, Ալաւաւաւա քաղաքում կը բացվի երկրաշարժական գործիքների մրցահանդէս, որի նպատակն է տեղական գիւղացիներին ցոյց տալ նրանց հողին և անտեսական պայմաններին համապատասխան գործիքների գործածութիւնը: Փորձեր կատարող յանձնաժողովը մշակել է ծրագիր, որով նա պէտք է զեկավարվի մրցահանդէսի միջոցին և կայացնի իր վերջնական որոշումները:

Պետերբուրգից Կովկաս է եկել միկուզ Եւալիսի, որ պէտք է խոչարացողային հետազոտութիւններ կատարի մեր երկրի զանազան կողմերում և մասնաւորապէս կախվում, ուր ծառեր են վէճեր ընկնում հիւանդութեան մասին: Եւալիսիի համարվում է լուրջ մասնագէտ և նրա կարծիքը կանխապէս առանձին նշանակութիւն:

Յուլիսի 15-ից, Թաւրիզից մեղ հաղորդում են հետեւալ տեղեկութիւնը. «Սյամասից խիստ չիտի լուրեր են գալիս, կոխ է տեղի ունեցել չիկակ կոչված քիւրդ աւաղակաւորայ ցեղի և պարսից սահմանապահ գործի մէջ: Մանրամասնութիւնը յայտնի չէ: Իսկ թիւրքաց կառավարութիւնը, ըստ իր աւաղակաւոր սովորութեան, չէ դադարում ամեն օր իր աղէտն երի միջոցով զանազան սուտ ու փայլվեցող լուրեր տարածել Սյամասում ապաստանած մի բուն զաղթական հայերի մասին, իբր թէ նրանք մինչև 10,000 հոգի սպառնալիքով յարձակում պիտի գործեն վասպուրականի վրա (??): Երբ պէտք է վերջ դրվի թիւրքերի այդ քաղաքականութեան:

«Од. Нов.» լրագրից հաղորդում է, թէ Թեոդօրիան պատրաստվում է մեծ չքով ամեն իր առաջին պատուաւոր քաղաքացու և բարերարի, հռչակաւոր նկարիչ Յ. Ալալզովսկու ծննդեան 80-ամեայ յօբելեանը, բայց Ալալզովսկին մերժեց այդ պատիւը այն պատճառով, որ զեռ բաւասուն օր չէ անցել Ալալզովսկու սիրելի թաւան մահվան օրից: Թեոդօրիաները յոյս ունեն Ալալզովսկու յօբելեանը կատարել սեպտեմբերին, նրա նկարչական գործունէութեան 60-ամեայ յօբելեանը:

Երբ, կազմակերպվում է մի ամբողջ արշաւանք. այդպիսի արշաւանքներ միշտ թիւրքերի համար աշող վախճան չեն ունեցել: Վերում մենք տեսնեմք որ նոյն իսկ քրիստոնեայ Ռուսաստանի դէմ մղած պատերազմների ժամանակ կրօնակիցներին կողոպտեցուց:

Այժմ հանդամանքները քիչ փոխվել են. թիւրքերի և քրդերի կողքին երեւան է եկել մի ընդհանուր թշնամի, որի վրա նրանք առաջ համարեա ուշադրութիւն չէին դարձում. ես խօսում եմ հայերի մասին, որոնք բնակվում են հիւսիսային Քրդիստանում: Մինչև վերջին ժամանակները հայերը համբերութեամբ տանում էին իրանց վրա բռնացած լուծը և քաղաքական դերի մասին չէին մտածում: Հասարակ հայերը, դիւղացիները, այժմ էլ այդպիսի մտքեր չունեն: Այդ թշնամու և ճնշված մարդիկ հազիւ ժամանակ ունեն իրական հայի մասին մտածելու: Բայց քաղաքներում ուրիշ բան է կատարվում: Ստաւրակից, գլխաւորապէս անգլիական, ներքին չափերի աղբիւրներին տակ վերջին տարիները քաղաքացի հայերի և հագեալականութեան մէջ սկսվեց աղիտացիա հայերի անկախութիւնը վերականգնելու և վաղուց կորած Հայաստանի վերածնութեան մասին: Այս հարցը ընդվեց Բերլինի կոնգրէստում և այս հանդամանքը Քրդիստանում ապրող հայերի մէջ զարթեցրեց մեծամեծ և անշախաւոր յոյսեր:*)

Հասկանալի է կատարութեան այն զգացմունքը, որ ծագեց քրդերի մէջ. իւրաքանչիւր մուսուլման և անշախաւոր յոյսեր:*)

*) Հեղինակը ոտի տակ արդում է պատմական անշախաւոր փաստերը: Բերլինի կոնգրէստը ոչ միայն բնեւէլ է այդ հարցը, այլ մե ամբողջ յօդուած է խնդարել և ստորագրել: Դա 61 չարաւարտ յօդուածն է, որ խոստանում է հայերին վարչական ընթացքներ: Միջազգային այդ իրաւունքի հիման վրա հայերը պահանջել են ընթացքներ և այդ սահմանել զուր չեն եկել: Անկախ Հայաստան ստեղծելը Թիւրքերի հնարած առաջնէն:

մեայ յօբելեանը: Ալալզովսկին, իր 80-ամեայ յօբելեանի օրը, սակայն, ընդունեց իր Շէյխ-Մամայ կալուածքում մի պատգամաւորութիւն թէոդօրիա քաղաքից, որը եկել էր հնորհաւորելու և մի ուղերձ մատուցեց թէոդօրիա քաղաքի կողմից:

Մեր թղթակցը Սյամասից հետեւալ տեղեկութիւն է հաղորդում մեղ. «Ռուսական միտաւորի ներկայացուցիչ հայր Վիկտոր Սիմալսկի լսիկ միջիկ շարժանակում է իր այցելութիւնը գիւղից գիւղ ամեն օր, ստուգանքներով օրթօգօքս եկեղեցու յարելու ցանկացողների թիւը, որը արդէն հասել է 12,000-ի: Յաջորդ չաբաթ նա կանցնի Ուրմիայ ընդարձակ դաշտի միւս կողմը, ուր հայաբնակ մեծ գիւղեր կան:

ՂԱԶԱՍԻ գաւառի Սի քար գիւղից մեղ գրում են. «Յուլիսի 20-ին վարդապետի տնին էր Ղազարի գաւառի բոլոր գիւղերից ուլա էին եկել մեր արարւմ գտնված «ս. Գրիգոր» ուխտատեղին: Արդիւնքը յատկացրված էր վերին-Աղզանի հայոց դպրոցին. այդ նպատակով եկել էին երկու հոգաբարձու և ֆարվանսարայից Մեհրուպ Քան. Էղլեան, որը ի դէպ, պ.պ. Արշալոյս Քանդարեանցի և Եւայի Տէր-Յովհաննիսեանցի հետ ժողովեց երկու զաղթականների համար, որոնք այստեղ էլ էին հաւել, 10 ր. 50 կոպէկ և յանձնեց նրանց: Գաւառի գործակալը, որ ի պաշտօնէ պարտաւոր էր լինել այնտեղ, չը կար, երկի ժամանակ չունէր հայոց դպրոցի համար արդիւնք ժողովելու: Բազմութիւնը շատ էր, այնտեղ էր և երկրորդ մասի պրիստաւ Թաթարով. նախնեցեալ տարիների նման կոխներ չը պատահեցին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիական «Daily News» լրագրի մէջ Օրեւոսի Հերբերտ զետեղել է Թիւրքիայի մասին մի ընդարձակ յօդուած, որ նա ուղարկել է Կ. Պոլսից: Հեղինակը մեծ նշանակութիւն է տալիս Կ. Պոլսին, որ կենտրոն է հանդիսանում մի շարք կարեւոր կուլտուրական խնդիրներին: Թիւրք տարրը իր մի քանի գեղեցիկ և ասպետական յատկութիւններին հետ միասին, ունի և շատ վատ ու յուսահատեցնող առանձնայատկութիւններ:

սուլմանի, բայց մասնաւոր իւրաքանչիւր քրդի համար բոլորովին անտանելի էր այն միտքը թէ նրանք, որոնք կազմում են երկրի աղգաբնակութեան մեծամասնութիւնը, հպատակված կը լինեն անպատեհաւոր միջոցներով իրաւարանութեան, որին իրանք ստատիկ տուում են:*)

Հայերի վրա յարձակումներ գործելու զէպքերը սկսեցին յաճախ կրկնվել և վերջապէս 1894 թ. Կալանի տեղի ունեցաւ Սասունի յայտնի կոտորածը: Պէտք է ասել որ կոտորածի առաջին առաջին աջողութեան րօպէներում անհաւատաւր անգլիկները գործեցին իրանց բռնած մահմետականների վրա:**)

(Կը չարաւարակվի)

*) Ընդհանրաւոր բոլորովին հասկանալի չէ քրդերի կատարութիւնը այնպէս ինչպէս վատաբանում է Հեղինակը: Եւրոպական դիւլմատիայի մի քանի անգամ ընթացքներ ծրագրելու է պատգամուր և առաջարկել Կ. Պոլսից, բայց երբեք ոչ ոք չէ մտածել քրդերին հպատակեցնել հայերին: Հայերու է միայն աղբիւր անցկացնել այդ ծրագրերը և օրվայ լսելի պէս պարզ կը լինի որ դիւլմատիայի ծանրերը միայն մի նպատակ ունեն— սուլ իրաւարանի հայերին մատուցանելու հաւասար իրաւունք, ստատուանել նրանց մշտական հաւատարմութիւնները, ձեռք բերել զուրի, անձի և պատուի ապահովում: Եթէ Եթէ մարդկային այս տարբերակ իրաւունքները Հեղինակը համարում է հպատակեցնել քրդերին, այն ժամանակ չը դիտեմք ինչ առաւել կը սայ նա հայերի դուլմտան, որը համար և ինչպէս բարեւ է վերը և շատեւ ապահով ապրելու կարողութիւնը:

**) Այստեղ Հեղինակը կրկնում է Թիւրք կառավարութեան պաշտօնական հերքումը, որ տպւելը քրդերներում Սասունի կոտորածից յետոյ: Բայց չէ որ մի ամբողջ միջազգային բնեւէլ յանձնաժողով, որը մէջ էր և առաջ Հիւպատոսը պարզաւարանել է այդ առաւելի գործը, չէ որ լուսաւորված աշխարհը համար պարթ թիւրքաց պաշտօնական հերքումը որ և է զին չունի նոյն իսկ ֆրանսիական Գիւլեն դերեն: Եւ հաստատում է որ քրդերը կոտորածները Կ. Պոլսի հրահանգներով են կատարվել: Մուսուլայ այդ բոլորը և դեռ խօսել Հայերի գործած չանդմութիւնները մասին... Ար հայերի քրդած չանդմութիւն էր հարկաւոր, և այն ժամանակ, կործանում էր, մի երեւ խօսք էլ կը լինէր քրդերի զաղանութիւնների մասին...

Նա լինելով ընդհանրապէս տղէտ և անկիրթ, գտնուելով ֆանատիկապէս հոսանքների և քաղաքականների ազդեցութեան տակ, հզորաժամ րօպէսներին հանդիսանում է իբրև մի չար և զիւական ոյժ, որ կործանում է ամեն բան, ինչի որ հանդիպում է: Թիւրք ամբողջ կայր հաւատ ունի դէպի իր սուլթանը, որ թէ պետութեան գլուխ է և թէ մի և նոյն ժամանակ կրօնական գլուխ: Այդ ամբողջի հասկացողութեամբ սուլթանի կամքով է կատարվում ամեն բան աշխարհում և նրա հրամայը սուրբ պէտք է լինի ամեն մի մասնակցանի համար: Խոյ ներկայ սուլթանը համապատասխանում է ամբողջի կրքերի յագեցնելուն: Սուլթանը իբրև հոգեբանական երևոյթ մի օտարաշխարհային է, լինելով սաստիկ խորամանկ, սաստիկ ջղային և չար, նա խառնելով է պետական գործերի մէջ և ամեն տեղ իր կամքը առաջ տանում: Բայց հալածելով ուրիշներին և հաղթաւոր լրտեսներով կաշկանդելով բոլորին, նա ինքը զգում է իրան հալածված և հաշկանդված բոլորից: Յամենայն դէպս, Թիւրքիայում կատարվող գործերի մէջ նա մեծ դեր է խաղում և նրանից կախված է շատ բան այդ տարաբաղդ պետութեան կեանքի մէջ:

Թիւրքաց սահմանադրութեան տարեգրքին հայերը, ինչպէս հեռագրում են «Neue Freie Presse» լրագրին Կ. Պոլսից, մտադրութեան ունէին մի նոր ցոյց անել: Այդ պատճառով բրիտանականներին հրամանագրված էր զինուորով, որպէս զի խառնակութիւնների դէպքում իւրաքանչիւր մարդ կարողանար պաշտպանուել: Ոստիկանութիւնը, տեղեկանալով այդ բանի մասին, իմաց տուեց բոլորին, որ իւրաքանչիւր անձն, լինի նա քրիստոնէայ թէ մահմեդական, պատժի կենթարկվի, եթէ նրա մօտ զէնք գտնվի: Մի հայ, որ լրտեսի պաշտօն ունէր թիւրքաց կառավարութեան մօտ, անձամբ յայտնեց մեծ վիզիրին, թէ Սեփիան-էֆէնդի անունով մի յայտնի հայ, Վանի նախկին փոխ-հանգամադար, իր ծառայի ուղեկցութեամբ, որը մէջքի տակ կրում է մի կաշուէ պարկ և յայտնի է թէ ինչ կայ մէջը, գիշերները պտտում է մայրաքաղաքի հայաց թաղերը, գրգռում է աղգարնակութիւնը, լուրեր է տարածում թէ չուտով խառնակութիւններ են լինելու և պահանջում է, որպէս զի բոլորը քաջութեամբ պաշտպանվեն: Մեծ վիզիրը հաղորդեց այդ բանը ոստիկանութեան մինիստրին և հրամայեց խիստ ընտելութեան կատարել: Հայկական կոմիտեի երեք անդամներ ձերբակալվեցին: Նրանք զէնքը ձեռքին զիմադրութիւն ցոյց տալին պիտիցային, բայց վերջը յաղթվեցին:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՄ ՊՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

Հանրապետական շարժումը Պորտուգալիայում վերջերս այնպիսի չափեր ստացաւ, որ կառավարութիւնը հարկադրված եղաւ կտրական միջոցների դիմել: Իժմադրաբար, այդ շարժման վրա իր ժամանակին պատշաճաւոր ուղարկութիւն չը դարձրել: Մինիստր նախագահ դէ-կաստրօ մեծ վստահութեամբ և հաւատով էր վերաբերվում հանրապետականներին, և ինքն էլ չափազանց ազատամիտ լինելով, հակառակ իր նախորդների, ամեն տեսակ արտօնութիւններ տալով հանրապետականներին, ոյժ տուեց ներքին: Սակայն, երբ մնացած մինիստրները հասկացրին նրան, որ այդ սխառմով պետութիւնը վտանգի է ենթարկվում, դէ-կաստրօ անպայաջ անհրաժեշտ միջոցներ ձեռք առաւ հանրապետականներն պրօպագանդային վերջ տալու համար: Պէտք է խոստովանվել, որ այդ ուշացած ձեռնարկութիւնները համարեա ոչինչ աջողութիւն չունեցան և ստիպված կը լինեն աւելի եռանդուն միջոցներ գործ դնել հանրապետական շարժումը ճնշելու համար:

Զարժումը սկսվեց նրանով, որ հանրապետական գումարուններ տեղի ունեցան Լիսաբօնում և Օպորտօում, ուր դժգոհութիւն էին յայտնում կառավարութեան գործառնութեան և նրա ֆինանսական կարգադրութիւնների դէմ: Այդ ժողովները մի քանիսն երաւ հանրապետականները սպառնում էին խօսքից գործի անցնել: Բայց կառավարութիւնը ոչինչ ուղարկութիւն չէր դարձնում այդ սպառնալիքների վրա: Պատգամաւորները ժողովում յաճախ հարց էր յարու-

ցանում հանրապետական շարժման մասին և մինիստր նախագահին մատնացոյց էին անում այն բանի վրա, որ շարժման գլուխ են կանգնած և գլխաւոր հետորներն են համալրարանի պրօֆէսօրները, որոնք որպէս կառավարչական պաշտօնականներ, իրաւունք չունեն այդպէս վարվելու: Դէ-կաստրօ պատասխանեց, որ այդ հանգամանքը չէ վերաբեր իր ուղարկութիւնից, բայց ինքն ուղարկութիւնն չէ դարձնում այդ բանի վրա, որովհետեւ 1891 թիւի ապստամբութիւնը անպայման, որ չէին համալրարանական պրօֆէսօրներին պակասում է գործական խելք և ճարտիկութիւն լուրջ շարժում կազմակերպելու և ժողովուրդը ապստամբեցնելու համար:

Հանրապետական կառակցութեան աջողութիւնը կախված է այն բանից, թէ արդեօք ներքին կաշոյղի իր կողմը դրաւել զօրքը: Կառավարչական շրջանները հաւատացած են, որ հանրապետականները բոլոր փորձերը այդ ուղղութեամբ անաջող կը լինեն:

Ստացված տեղեկութիւնների համեմատ, Լիսաբօնում և Օպորտօում կարգը և հանգստութիւնը վերականգնվում է: Օպորտօում սպասում էին, որ ապստամբական մի նոր բռնկում կը լինի, այս անգամ զօրքի հետ միասին, բայց չաջողվեց կառավարութեան ձեռք առած միջոցների շնորհով:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅՈՒՄ

Կ. Պոլսի, յուլիսի 22-ին

Նախ որովհետեւ դեսպաններուն մէջ համեալութիւնը կը պակասի ու յետոյ որովհետեւ թիւրք կառավարութիւնը յաղթութեամբը երես առած անընդհատիկ պայմաններ կառավարելու ղեկավարութեանը նիստերը դեռ կը շարունակվին, ու պիտի շարունակվին: Միայն թէ ոչ հարցը ամբողջովին ծնված ըլլալով ետ առաջ համաձայնութեան մը յանգումը մօտալուտ կը թուի, որով և ոչ-չառ ուժ՝ հայտութեան կնքում կը յուսացուի: Կըսուի թէ պատերազմական տուգանքը 4 միլիօն ոսկիի յանդեր է. իսկ նոր գծվելը սահմանադրութիւնը թիւրքը զբաւումը մայրերէն առհասարակ քաջանելով հանդերձ Թէսալիոյ ընդարձակ դաշտին վրա արիւղ ամենակալութեան ամբողջութիւններ ու կիրճեր իր ձեռքը պիտի մնան, մերձակայ Ռուման (Քուսօ-Վալաք) գիւղերով միասին: Յունաստանը պիտի վճարէ նաև պատերազմին հետեւանքով թրքահայտակներու քաշած վնասը, որ կը հասնի եղբւր մինչև 300,000 օսմանեան ոսկու: Ու յետոյ Թիւրքիա բնակող հնդկահայտակ յոյները պիտի զրկուին մի քանի իրաւունքներէ:

Սեր Բարենինամ կառավարութեան մէջ հին նուազը, որ հայերուս շատ լաւ ծանօթ է, վերջերս յաճախ երգուեցաւ յունական հարցի առթիւ ալ.—գրաւուած վայրերէն տեղացի երեւելիներ (?), մասնաւորաբար ուսմաններ ու հրէաներ բաղձատուրաբար հանրազրութիւններ մատուցին թիւրք հայրանամ կառավարութեան: Նրա ըզձալի հպատակութիւնը և եթ կամեցող ու նրա մեծ-մեծ բարեխառնութիւնները թուող: Աւելորդ է այս երգին իմաստն ու արժանիքը լաւատուրը, որովհետեւ ինչպէս ես՝ դուք ևս շատ լաւ ճանաչած պէտք է ըլլաք զայն: Եւ մեր գործողութիւն վեհախառն սուլթանը կարծելով թէ դեռ անծանօթ է այդ նուազին Եւրօպայ՝ անոր ականջին յաճախ հնչեցուց զայն: Բայց դեռ աւելին կայ. կարգացրէ խղիւղում յետագայ հաստատումը—որ տեղական թերթներու մէջ հրատարակեցաւ—և պիտի տեսնէք թէ որչափ մեծ նմանութիւն կայ սրա և մեր գիտցած մէջ ուրիշ երգին մէջ՝ որուն հեղինակն դարձեալ նոյն ինքն մեր հանձնարել կառավարութիւնն է, բայց սա աւելի ներշնչուած, ընտիր կտոր մէ:

Քաղաքացիական Սպառնալիքներ և Սպառնալիքներ լատիշ վանալիքներն քաշանալին և երեւելալ կըսէ Ռոտմի 104 ստորադրութեամբ շնորհաւորութեան հետեւալ դէպք ուղղած էն Եւրօպայի շարք.—«Կեցցէ մեր վեհապետն օգոստոսեալ սուլթան Ապա-Խալ-Համիտ Խան: Օսմանեան զինուորը մեր զինվոր լինեցին 300-ի չափ աւաղակներ, որը թրքիական օսմանեան զօրաց կողմէ դաւաճեցին յետոյ մեր զինվոր դալով մեզ ամենաւր կը իրեւեցին և մեր ինքը կեանքն ու պատիւը վտանգեցին: Նոյն պէս վանեցին այն աւաղակներն, որը կըսէ ըրած էին Վարդապետ աղաքակէն Եւրօպ օսմանեան զինուորացի: Այս կըսածներն երախտադրութեամբ տեսնէք: Պատիւներն, կեանքներն ու Բեքերներն յետ այստեղի

ապահովուած են, որուն համար յանապա շնորհաւորութեան: Ձեր վստահութեան տրեքն համբուրելով կը ինքընքը որ օսմանեան զինուորը մեր զինվոր մէջ մնան և միանգամայն կաղերսեն որ օսմանեան կառավարութիւնն, որուն հպատակներն են, իր զօրաց միջոցաւ զիւր պաշտպանէ Լիւքսն աւաղակաց կեղեքութեանը»:

Խոստովանեցէր, որ հրաշակեալ մէջ այս: Բարենորոգումները ամենայն փութաշնուութեամբ կը մտցուին Հայաստանի նահանգներուն մէջ. վերջերս ալ տասնորդի տուրքը գանձելու ուր (բարենորոգում) եղանակի մասին ներքին գործոց նախարարութեան կողմանէ գաւառները հրահանգներ գրկուեցան: Ահաւասիկ, ներքինակալ է այս առթիւ տեղական թերթներու մէջ լայն տեսած հատուածը.—ինչ երջանիկ, բարեբաւտիկ շրջանի մէջ մտած ենք. Հայաստան կը բարենորոգուի մեր հայրանամ թիւրք կառավարութեան փութաշնուութեամբ. նվ երկնիք...:

Տեղական լրագրերու հաղորդած լուրին նայելով, հրապարկելու ու Սեբաստիոյ նահանգներէն ոստիկան-գինուորներ ուղարկուած են եղբւր Միւնստիլի (Միւնստիլ) հրոսակաղետին վրա՝ դաշն ու իր խումբը ձերբակալելու համար, որ կը գործէ այս երկու նահանգներուն միջև: Ստորը միայն սա է, որ այս փորձը ուրիշ շատ անգամներ եղած ըլլալով հանդերձ ինչեալ իրմբապեւ յաջողած էր իր վրա քաղաքները կոտորելով կորալուիս ետ դարձնել, ու ցարք զոյուլթիւն ունի:

Մտած ենք արդէն ձերբակալութեանց ու լրտեսութեանց (մասնաւորապէս հայերու համար) սեղանին մէջ. աջ ու ձախ ձերբակալութիւններ վերակալ, թէ և ոչ մեծ թափով, մասնաւորապէս որ առիթն ալ չի թերացաւ երևան գալ. Բերաբնակող տօթթ. Գարապաշեանին տունը կը ներկայանան երկու հայեր զորս պահանջելու համար, ինչեալին մասնութեամբ ոստիկանութիւնը կաշոյղի զանոնք ձերբակալել, թէ և ոչ դիրտութեամբ, որովհետեւ բաւական ժամանակ դաշոյններով կը դիմադրեն ոստիկանութեան, և տեղեկանալով եղածին մասին, ձեռնարկեց խուզարկութեանց ու ձերբակալութեանց:

Անցեալները ձերբակալուած երիտասարդ թիւրքերը, որոնց մասին արդէն գրել եմ, արտուրեցան հեռաւոր վայրեր:

Առհասարակ քաղաքներն խուզ հանդարտութիւն մը ունի. ոստիկանութեան աշալուրջ, յարատեւ հսկողութիւնը կը հանգստացնէ վրդուլուած մըտքերը, թէ և վարանդներ ալ չեն պակսեր:

Գարեգին

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մի անձն, որ մօտ յարաբերութիւններ ունի զանիական թագաւորական ընտանիքի հետ, և վերջերս մի քանի անգամ տեսնուել է յունաց թագաւորի հետ, հաղորդեց «Frankfurter Zeitung» լրագրին. «Թագաւորը կրկին անգամ հաւատացեց ինձ, որ ինչ էլ լինեն պատերազմի հետեւանքները, ինքն երբեք չի փոխանի, որ պատերազմ յայտնուի Թիւրքիային: Թագաւորն անոյ իշխանը կը մնայ Թերմօպլիսում մինչև խաղաղութեան կնքելը և ապա մէկ տարով կերթայ արտասահման, չը մանկելով Աթէնք, ուր հասարակական կարծիքը կատաղած է նրա դէմ: Խաղաղութեան դաշն կապելուց յետոյ զինուորական մինիստրը դատի կենթարկի մօտ հարիւր օֆիցէրներին»:

—Անգլիական լրագիրները Կանէյի թղթաւիցները հաղորդում են, որ խորհրդակցելուց յետոյ ծաղկապսակները վճուեցին դիմադրել թիւրքաց զօրքերի ափ իշխուելու Կրեմէում և յայտնեցին իրանց որոշումը նահանգապետ Ռոմայիլ ըէյին:

—Ներկայումս Աթէնքից և Լօնդօնից լուրեր են տարածել, որ իբր թէ յունաց թագաւորը յայտնել է, որ եթէ միջազգային կօնաբօլ հաստատուի յունական ֆինանսների վրա, ինքն չի ստորագրի խաղաղութեան դաշնագիրը և կը հրաժարվի դաժից:

—Թէսալիայից յետ են կանչված 8 բաւալիօն ալբանական զօրքեր: Մի և նոյն ժամանակ Բ. Գուսը հրաման արձակեց զինաթափ անել Մալեգօնիայի մահմեդական աղգարնակութիւնը:

—Կ. Պոլսից գերմանական լրագիրներին հաղորդում են, որ Կ. Պոլսի դեսպանների փոփո-

խութեան լուրը մեծ խօսակցութեան առարկայ է դարձել: Թիւրքաւոր Նէլիօլի տեղ յայտնի թիւրքաւոր Ջիւսօլիէին նշանակելը իրարանցում է զցել թիւրքաց պաշտօնական շրջաններում:

—Կ. Պոլսի բժշկական դպրոցում տեղի ունեցած խաղաղութիւնների մասին եւրօպական լրագիրներին հաղորդում են, որ յաղմուները սկսվեցին անցեալ չորեքշաբթի ու զինիւր Ռումանիների և վարչութեան օֆիցէրների մէջ կուր պատահեց: Օֆիցէրները օդնութեան կանչեցին զինուորներին, որոնք սկսեցին զէնք բանեցնել: Նրկու ուսանողներ ծանր կերպով վերադարձեցին: Մէկի աչքերը հանեցին, իսկ միւսը գետնի վրա ընկաւ ուշաթափ: Ուսանողները, ի հարկէ, յաղթվեցին և բանտարկվեցին: Յուզմունքի ժամանակ դպրոցի զինկտօրը կամենում էր հրամայել, որ հրացանաղարկ անեն բոլոր ուսանողներին: Բարեբաղդաբար, վերից հրաման եկաւ, և արգելեց այդ անմիտ հրամանը: Զօրքերի հրամանատար Բահր-բէյ հայտնաւ էր ուսանողներին և նրանցից մէկից ապտակ ստացաւ: Զինուորական դատարանը նոյն դիւշերն և եթ զատապարտեց ուսանողին երեք տարվայ բանտարկութեան: Բանտարկված ուսանողները մինչև այժմ չեն արձակված: Այժմ որոշված է 47 ուսանողներին աքսորել կայսրութեան զանազան ծայրերը:

—«Neue Freie Presse» լրագրին հաղորդում են, որ Կ. Պոլսի հարեմում ձերբակալվեցին տասն և չորս կանայք երիտասարդ թիւրքերի կառակցութեան պրօպագանդային մասնակցելու համար: Տարւ ձերբակալված կանայք աքսորվեցին: Բաղմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցան օֆիցէրների, ուսանողների և փաստաբանների մէջ:

—«НОВОСТИ» լրագրին հեռագրում են Վիեննայից. «Վերջին պատերազմի ժամանակ սպանված թիւրքաց զինուորների հարիւրաւոր այրիներ և որբեր Կ. Պոլսում գնացին զինուորական մի-նիստրութիւնը և զանգառում էին իրանց թըլաւա գրութեան մասին. նրանց հանգուցաւ աւուսիները կենանք ժամանակ ուճիկ չէին ստանում 1896 թիւից, իսկ մահից յետոյ այրիներին և որբերին ոչինչ թոշակ չը թողին, այնպէս որ որբացած զինուորների ընտանիքները կատարելապէս սովամահ են լինում»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԿԻՐՆԵՐ

ԹՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՐԱՄՆՈՆ-ՍԵԼՈ, 28 յուլիսի Յուլիսի 27-ին, գերմանական կայսերական զոյգի գայուց մի փոքր առաջ Պետերսօֆից ժամանեցին Թագաւոր Կայսրը և Թագուհին Կայսրուհին ավիտայով, կայսրանում դիմադրեցին Նրանց Մեծ Իշխանները և Իշխանուհիները 5 ժամ 45 րօպէսին դընացելով հասաւ գերմանական կայսերական զոյգը զինուորական ավիտայով, նրանց գերմանացիին Թագաւորը, Թագուհին, Կրանիօ Սեբաստիանը, Կայսրուհին Մեծ Իշխանները և Իշխանուհիները և ավիտան: Նրա քնացքը մօտեցաւ, երաժշտութիւնը ամեց զգերմանակտն օրհներգը: Անցեալով պատաւար պահակազնդի առջից, երկու կայսրները ավիտայով գնացին Թագաւորական սենեակները, ուր սպասում էր Նրանց Կայսրուհին: Նրանց Կայսրները ձի նստեցին, երկու Կայսրուհիները հետեւում էին Կայսրներին քառածի կառքով: Նրանց հետեւում էին ձի հեծած բոլոր Մեծ Իշխանները և ավիտան: Պրօսական Հէն-րիկ Իշխանը ընթանում էր Կայսրահիների կառքի մօտով: Գերմանական կայսրը ողջունում էր զօրքերին ուսանողները: Պոլսում բանաւորում աւարտվեց 8 ժամին: Նրա Կայսերական երկու Զոյգերը ժամանեցին Թագաւորական վերանը, երաժիշտների միացած խումբերը ամեցին զգերմանական աղգային օրհներգը և նուագեցին երաժշտական մի քանի կտորներ. ապա երաժշտութիւնը նուագեց գերմանական կայսրի «Gesang an Egit» հեղինակութիւնը: 9 ժամին Թագաւորը Կայսրի հետ, երկու Կայսրուհիները և բոլոր Մեծ Իշխանները ու Իշխանուհիները գնացին Կրանիօ-Սեբաստիանի պալատը, ուր ճաշ էր պատրաստված: 10 ժամին Կայսրները և Կայսրուհիները ներկայութեամբ ներկայացում տեղի ունեցաւ Կրանիօ-Սեբաստիանի թատրոնում:

ՊԵՏԵՐՍԲՈՐԳ, 28 յուլիսի Ներքին գործերի մինիստրը որոշեց՝ դադարեցնել «Одесский Листок» լրագրի հրատարակութիւնը երկու ամսով:

Կ. ՊՈԼԻՍ, 28 յուլիսի Սերբիական դեսպանին տուած օւսկնդրութեան ժամանակ, սուլթանը խոստացաւ լուծել զպրոցական և եկեղեցական հարցերը սերբիացիների ցանկութեան համաձայն:

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорист-Меликовская ул., д. каз.